

**«Հագարամյակի մարտահրավեր»  
հիմնադրամ-Հայաստան» ծրագրի**

Շահառուների խորհրդի անդամների  
ընտրությունների կարգը

Հաստատվել է

**«Հագարամյակի մարտահրավեր»  
հիմնադրամ-Հայաստան» ծրագրի  
Շահառուների խորհրդի**

**«31» օգոստոսի 2009թ.-ի նիստի որոշմամբ**

## **ԿԱՐԳ**

**ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

## **1. Ընդհանուր դրույթներ**

1.1

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը (ՇԽ) բաղկացած է 15 անդամներից:

1.2

Հաշվի առնելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի պահանջները, յուրաքանչյուր ծրագրային տարում տեղի են ունենում Շահառուների խորհրդի անդամների ընտրություններ՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով՝

- Համաձայն ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման Համաձայնագրի (Հոդված 3; բաժին 1.0; կետ դ) ՇԽ անդամները պաշտոնավարում են մեկ տարի ժամկետով, պայմանով, որ նրանք կարող են վերընտրվել:
- ՇԽ կազմի լիազորությունների ավարտը համարվում է ընտրական տարվա սեպտեմբերի 28-ը:
- ՇԽ անդամների թիվը չպետք է գերազանցի 15-ը:
- Բոլոր շահառու խմբերի համար անցկացվում է մեկ ընդհանուր ընտրություն:
- ՇԽ անդամների ընտրությունները տեղի են ունենում յուրաքանչյուր ընտրական տարվա սեպտեմբեր ամսվա վերջին շաբաթ օրը:

## **2. Ընտրությունների կազմակերպում**

2.1

Ընտրական ողջ գործընթացն իրականացվում է Շահառուների խորհրդի կողմից:

2.2

**Շահառուների խորհուրդը** մինչ 2009թ.-ի օգոստոսի 18-ը մշակում է ՇԽ անդամների Ընտրությունների կարգի նախագիծը, որը տեղադրվում է ՀՄՀ-Հայաստանի պաշտոնական ինտերնետային կայքում՝ [www.mca.am](http://www.mca.am) հասցեով և բաց է առաջարկությունների համար: Ինտերնետային կայքում տեղադրվելուց հետո մեկ շաբաթ անց Շահառուների խորհուրդը հերթական նիստում քննարկում և հաստատում է ընտրությունների կարգը (այսուհետ՝ Կարգ) և վերջինիս հավելվածները՝ ներառյալ մասնակցության հայտը (կցվում է, հավելված 1) և քվեաթերթիկի ձևը (կցվում է, հավելված 2):

2.3

**Շահառուների խորհրդի** կողմից հաստատված ՇԽ անդամների Ընտրությունների Կարգը վերջնական է:

Կարգի դրույթների առնչությամբ առաջացած տարաձայնությունների դեպքում, գերակայությունը տրվում է «Հազարամյակի մարտահրավեր» Միջկառավարական Համաձայնագրի և Կառավարման Համաձայնագրի համապատասխան դրույթներին:

2.4

**Շահառուների խորհուրդը** հաստատում է իր կողմից մշակված՝ ՇԽ անդամների ընտրության մասնակցության հայտի նմուշը (կցվում է, հավելված 1), որը պարունակում է համառոտ տեղեկատվություն հայտատու անձի և վերջինիս կողմից ներկայացվող կազմակերպության վերաբերյալ: Հայտի նմուշը մինչև ընտրական տարվա սեպտեմբերի 6-ը տեղադրվում է ՀՄՀ-Հայաստանի պաշտոնական ինտերնետային կայքում՝ [www.mca.am](http://www.mca.am) հասցեով:

2.5

**ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը** Ընտրական հանձնաժողովի ձևավորման համար ընտրություններից առնվազն 25 օր առաջ հայտարարություն է տեղադրում Հայաստանի 3 այնպիսի թերթերում, որոնք տարածվում են մայրաքաղաքում եւ մարզերում ու ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքում՝ [www.mca.am](http://www.mca.am) հասցեով:

Ընտրություններից ոչ ուշ քան 15 օր առաջ, **Շահառուների խորհուրդը** ձևավորում է Ընտրական հանձնաժողով Շահառուների խորհրդի հերթական նիստում:

2.6

**Ընտրական հանձնաժողովը** ձևավորվում է հայտարարության արդյունքում ինքնաառաջադրված անձանցից, **Շահառուների խորհուրդի** ձայների պարզ մեծամասնությամբ:

2.7

Գործող Շահառուների խորհրդի անդամները և նրանց փոխարինողները, ինչպես նաև Շահառուների խորհրդի անդամների թափուր տեղերի համար թեկնածու առաջադրված (որպես հավանական ընտրվող) անձինք չեն կարող լինել Ընտրական հանձնաժողովի անդամ:

2.8

**Ընտրական հանձնաժողովը** կազմված է 7 հոգուց:

2.9

**Ընտրական Հանձնաժողովն** իր կազմից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում է Հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Ընտրական Հանձնաժողովի նիստերն իրավագոր են անդամներից առնվազն 5-ի մասնակցության դեպքում: Ընտրական հանձնաժողովի նիստերը բաց են հանրության ցանկացած դիտարկման համար: Շահագրգիռ կազմակերպությունները պատշաճ իրազեկվում են Ընտրական հանձնաժողովի նիստերի մասին:

2.10

**Ընտրական հանձնաժողովն** իրականացնում է մասնակիցների գրանցումը ըստ ներկայացված հայտերի, կազմակերպում և իրականացնում է ՇԽ անդամների ընտրության նպատակով անցկացվող քվեարկությունը և ամփոփիչ փաստաթղթերի մշակումը՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը:

### **3. Ընտրություններին մասնակցության իրավունք**

#### **Որպես ընտրող**

3.1

Ընտրություններին կարող են մասնակցել Հայաստանում գործող բոլոր այն հասարակական կազմակերպությունները, միությունները, պետական մասնակցություն չունեցող հիմնադրամները, ջրօգտագործողների ընկերությունները և ոչ առևտրային ֆերմերային կոոպերատիվները, որոնք ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցվել են մինչ ընտրական տարվա օգոստոսի 1-ը: Կազմակերպությունների մասնաճյուղերը, անկախ իրենց պետական գրանցումից, ինքնուրույն հանդես գալ չեն կարող:

3.2

Կազմակերպությունը ընտրություններին մասնակցում է մեկ լիազոր ներկայացուցչի միջոցով:

3.3

Կազմակերպության լիազոր ներկայացուցիչ չեն կարող լինել ՇԽ կանոնակարգի 8.3 սահմանված անձինք:

3.4

ՇԽ ընտրություններին մասնակցելու նպատակով շահագրգիռ անձինք պետք է ներկայացնեն մասնակցության վավերական հայտ:

3.5

Հայտը համարվում է վավերական, եթե լրացված է ամբողջությամբ, կնքված կազմակերպության կնիքով և ստորագրված կազմակերպության ղեկավարի կողմից, ինչպես նաև որպես հավելվածներ պարունակում է հետևյալ փաստաթղթերը՝ կազմակերպության գրանցման վկայականի պատճենը, կազմակերպության կողմից տրված լիազորագիրը (եթե ներկայացուցիչը կազմակերպության ղեկավարը չէ) և առաջադրվող անձի համառոտ կենսագրությունը:

#### **Որպես հավանական ընտրվող կամ ՀՄՀ-Հայաստան ՇԽ անդամության թեկնածու**

3.6

Ընտրություններին որպես թեկնածու կարող են մասնակցել այն անձինք, որոնք իրավունք ունեն հանդես գալ որպես ընտրող, կատարել են համապատասխան նշումը հայտի 3.1 կետում և բավարարում են սույն կարգի 3.7 կետի պահանջներին:

3.7

Անձը կարող է առաջադրվել որպես ՇԽ անդամի թեկնածու, եթե՝

ա) ունի ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաքելությանն ու նպատակներին (օրինակ, ջրային ոլորտի, գյուղատնտեսության զարգացում, համայնքների զարգացում/կառավարում, բնապահպանություն, մարդու իրավունքների պաշտպանություն, արդյունավետ կառավարում, տնտեսական զարգացում, հասարակության մասնակցություն խթանում) առնչվող առնվազն 2 տարվա աշխատանքային և/կամ մասնագիտական փորձառություն և կցել է համառոտ կենսագրությունը:

#### **Հայտի ներկայացման գործընթաց**

3.8

Ընտրություններին մասնակցելու համար Շահագրգիռ անձինք մինչև **Ընտրական տարվա սեպտեմբերի 15-ի ժամը 18<sup>00</sup>-ը** պետք է ներկայացնեն մասնակցության հայտը և պահանջվող փաստաթղթերը: Փաստաթղթերը պետք է ներկայացվեն ՀՄՀ-Հայաստան գրասենյակ Հայաստան - 0010, Երեւան, Մելիք-Աղամյան փ., 2/1 հասցեով (ՇԽ օգնականին) կամ ուղարկել [elections@mca.am](mailto:elections@mca.am) էլ. հասցեին:

3.9

Ընտրությունների մասնակցի (որպես ընտրող և ընտրվող) ներկայացրած հայտի և սույն կարգի պահանջների միջև անհամապատասխանության դեպքում հայտը մերժվում է ընտրական հանձնաժողովի կողմից, որի մասին հայտերի ստացման վերջնաժամկետից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր ծանուցվում է անձին՝ նշելով հայտի մերժման հիմքերը:

ՇԽ օգնականն ընդունում է ընտրության մասնակցության միայն վավերական հայտերը և հայտի ընդունումը հաստատում է ստացականով, որում նշվում է հայտի հանձնել-ընդունելու ժամանակը: Էլեկտրոնային կամ սովորական փոստով հայտերի ստացումը եւ վավերականությունը հավաստելու համար ՇԽ օգնականն ուղարկում է համապատասխան էլեկտրոնային նամակ կամ գրություն:

3.10

Ընտրական հանձնաժողովը ստուգում և գնահատում է բոլոր ստացված հայտերը և կազմում է մասնակիցների ցուցակը՝ համաձայն ընդունված հայտերի, հայտատու անձանց կողմից ներկայացվող կազմակերպությունների անվանումների այբբենական կարգով և մինչև ընտրական տարվա սեպտեմբերի 22-ը հրապարակում այն՝ ցանկը տեղադրելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի պաշտոնական վեբ կայքում. [www.mca.am](http://www.mca.am) հասցեով:

#### **4. Ընտրական գործընթաց**

4.1

Յուրաքանչյուր մասնակից ունի մեկ քվեաթերթիկ (կցվում է, հավելված 2) ստանալու և մինչև 5 թեկնածուի օգտին քվեարկելու իրավունք: 5-ից ավելի թեկնածուի օգտին քվեարկած, քվեարկության այլ ձևերով նշմամբ, քվեարկության նշանի չնախատեսված տեղում դրված, ջնջման կամ ջնջումների առկայությամբ քվեաթերթիկները համարվում են անվավեր:

4.2

Քվեաթերթիկում նշվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ թեկնածու անձի անուն-ազգանունը, վերջինիս կողմից ներկայացվող կազմակերպության անվանումը: Քվեաթերթիկում թեկնածուների անունները շարադրվում է այբբենական կարգով:

4.3

Քվեաթերթիկում տեղ են գտնում այն թեկնածուները, որոնք մինչև ընտրությանը նախորդող 6-րդ օրը, ինքնաբացարկ չեն հայտնել:

Ինքնաբացարկի առկայության դեպքում, համապատասխան տեղեկատվություններ են ավելացվում [www.mca.am](http://www.mca.am) կայքի թեկնածուների բաժնում:

4.4

Քվեաթերթիկների քանակը հավասար է հայտ ներկայացրած անձանց քանակի 105%-ին:

4.5

Քվեաթերթիկները բազմացնում է ՇԽ օգնականը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գրասենյակում: Քվեաթերթիկների բազմացմանը, ցանկության դեպքում, կարող են ներկա գտնվել Ընտրական Հանձնաժողովի անդամները:

4.6

Քվեաթերթիկների հակառակ կողմում, քվեարկության նախորդ օրը ստորագրում են Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները:

4.7

Ցանկության դեպքում, թեկնածուները ընտրության նախորդ օրը, ժ.15:00-16:00-ի ընթացքում կարող են քվեաթերթիկի հակառակ երեսին գետեղել իրենց ստորագրությունները:

4.8

Մինչև ընտրությունները քվեաթերթիկները պահվում են ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրենի մոտ:

4.9

Քվեաթերթիկները ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենը տրամադրում է ընտրական հանձնաժողովի նախագահին, քվեարկության օրը ժամը 8:50-ին՝ քվեարկության վայրում:

4.10

Շահագրգիռ անձը քվեարկության է ներկայանում անձնագրով:

4.11

Քվեաթերթիկում ընտրողները նշումները կատարում են նախընտրելի թեկնածու(ներ)ի անունների դիմաց՝ համապատասխան վանդակ(ներ)ում V նշանով:

4.12

Քվեարկությունը.

- Ընտրությունն իրականացվում է 1 օրում, փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությունը անցնում է ժամը 9<sup>00</sup>-18<sup>00</sup> ընթացքում:

- Ընտրությունները կանցկացվեն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից նախանշված վայրում:

- Ընտրական հանձնաժողովը ընտրությունների արդյունքներն ամփոփում է ընտրության օրը ժամը 18:00-21:00-ը:

- Ընտրությունների արդյունքները ու համապատասխան արձանագրությունը հրապարակում են Ընտրական հանձնաժողովի նախագահը եւ անդամները մույն օրը ժամը 21:00-ին՝ հրավիրվող մամլո ասուլիսի ժամանակ:

- Ամփոփիչ արձանագրությունը տրամադրվում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ օգնականին մույն օրը ժամը 21:30-ին: Արձանագրությունը տեղադրվում է [www.mca.am](http://www.mca.am) կայքում, քվեարկության հաջորդող աշխատանքային օրը, մինչև ժամը 16:00-ն:

- Ընտրությանը դիտորդի կարգավիճակով կարող է մասնակցել ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ՝ առանց նախնական հավատարմագրման եւ առանց ընտրական գործընթացներին խանգարելու:

- Շահառուների խորհրդում ընտրված են համարվում առավելագույն քվեներ ստացած 15 թեկնածուները:

- Հավասար քվեներ հավաքած թեկնածուների առաջնահերթությունը որոշվում է տեղում՝ Ընտրական հանձնաժողովի կազմակերպած վիճակահանությանը:

## **5. Շահառուների խորհրդում ընտրված անձանց կարգավիճակը**

5.1

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը ընտրված անդամները կազմում են ծրագրի Շահառուների խորհրդի նոր գումարում, որի լիազորությունների ժամկետը մինչև հաջորդ տարվա ընտրությունների արդյունքների պաշտոնական ուժի մեջ մտնելն է:

5.2

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդն առաջնորդվում է 2009թ. նոյեմբերի 22-ին ընդունած կանոնակարգով, ՀՄՀ-Հայաստան Համաձայնագրով և այլ փաստաթղթերով:

## **6. Այլ դրույթներ**

6.1

Ընտրությունների կարգի և հարակից փաստաթղթերի նախագծերը մշակում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը: Շահառուների խորհուրդը հաշվի է առնում իրեն պատշաճ կերպով ներկայացված բոլոր գրավոր առաջարկները:

6.2

Ընտրական հանձնաժողովը լուծարվում է ընտրությունների գործընթացի ավարտից մեկ շաբաթ անց:

6.3

Ընտրական գործընթացի վարչարարությունը համակարգվում է ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի եւ ՇԽ օգնականի միջոցով:

## **7. ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ անդամի ետկանչը**

7.1

Շահառուների խորհրդի անդամի ետկանչը կարող է տեղի ունենալ այդ անդամի ընտրությանը մասնակցած և քվեաթերթիկ ստացած կազմակերպությունների թվի կեսից ավելիի գրավոր ստորագրությամբ հաստատված պահանջը Շահառուների խորհրդին ներկայացվելու դեպքում՝ հետևյալ հիմքերով.

- ակնհայտ է՝ մի կողմից այդ անդամի և մյուս կողմից ՀՄՀ-Հայաստան ծրագրի և/կամ դրա որևէ բաղադրիչի միջև շահերի բախում,
- ստորագրողներն ապացույցներ ունեն, թե այդ անդամը Շահառուների խորհրդում չի ներկայացնում Ծրագրի շահառուների շահերը,
- ստորագրողները ապացույցներ ունեն, թե այդ անդամը գիտակցված խախտել է ՀՄՀ-Հայաստան Համաձայնագիրը և/կամ Կառավարման Համաձայնագիրը և/կամ ՇԽ կանոնակարգը, ու շարունակում է մնալ ՇԽ անդամ,
- ստորագրողներն ապացույցներ ունեն, թե այդ անդամը հիվանդության պատճառով գործունակ չէ և/կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկված է ու շարունակում է մնալ ՇԽ անդամ:

**ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ  
ՀԱՅՏ**

**1. Տվյալներ կազմակերպության մասին**

1.1	Կազմակերպության անվանումը.
1.2	Կազմակերպության իրավական տեսակը (հիմնադրամ, հասարակական կազմակերպություն, միություն, ՋՕԸ, այլ).
1.3	Կազմակերպության գրանցման ամիս-ամսաթիվ-տարեթիվը.
1.4	Կազմակերպության գտնվելու վայրը.
1.5	Կազմակերպության մասնաճյուղ(եր)ի առկայությունը, քանակը, գործունեության մարզերն ու տարածքները.
1.6	Կազմակերպության առաքելությունը և գործունեությունը (անհրաժեշտության դեպքում կարող եք կցել ևս մեկ էջ).
1.7	Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերը (անհրաժեշտության դեպքում կարող եք կցել ևս մեկ էջ).
1.8	Կազմակերպության հասցեն, էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարները, վեբ կայքը, եթե կա այդպիսին.
1.9	Կազմակերպության լիազորված անձի (նախագահ, գործադիր տնօրեն կամ այլ կարգավիճակ՝ ըստ կանոնադրական փաստաթղթերի) պաշտոնը, անուն-ազգանունը, կոնտակտային տվյալները.

**2. Շահառուների խորհրդի անդամների ընտրություններում կազմակերպության ներկայացուցչի վերաբերյալ տեղեկատվություն.**

2.1	Շահառուների խորհրդի անդամների ընտրություններում կազմակերպության կողմից լիազորված ներկայացուցչի անուն-ազգանունը.
-----	---

2.2	Կազմակերպությունում գրադեցրած պաշտոնը.
2.3	Այլ հաստիքային աշխատանք ունենալու դեպքում խնդրում ենք նշել աշխատավայրը եւ պաշտոնը.
2.4	Անհատական կոնտակտային տվյալները (հեռ., e-mail).

**3. Ընտրություններին կազմակերպության մասնակցելու կարգավիճակը (ընդգծեք).**

3.1	ա/ Միայն որպես ընտրող <input type="checkbox"/> բ/ Որպես ընտրող եւ ՇԽ անդամության թեկնածու <input type="checkbox"/>
-----	---

**4. Խնդրում ենք շարադրել հետևյալ հարցերի պատասխանները.**

4.1	Ծրագրի n <sup>o</sup> շահառու խմբեր է ներկայացնում Ձեր կազմակերպությունը (խնդրում ենք նշել). ա/ ջրօգտագործողներ <input type="checkbox"/> բ/ համայնքների բնակիչներ <input type="checkbox"/> գ/ ֆերմերների խմբեր <input type="checkbox"/> դ/ բնապահպանական կառույցներ <input type="checkbox"/> ե/ այլ (խնդրում ենք նկարագրել) <input type="checkbox"/>
4.2	Խնդրում ենք մի քանի բառով նկարագրել Ձեր դերը որպես Շահառուների խորհրդի անդամ՝ կապելով դա Ձեր աշխատանքային և/կամ մասնագիտական փորձառության հետ (միայն թեկնածուների համար, անհրաժեշտության դեպքում կարող եք կցել ևս մեկ էջ):

**Հայտին պարտադիր կցվող փաստաթղթեր.**

- Կազմակերպության գրանցման վկայականի պատճենը
- Շահառու խմբի կամ կազմակերպության կողմից տրված լիազորագիրը, եթե լիազոր ներկայացուցիչը կազմակերպության ղեկավարը չէ
- Լիազոր ներկայացուցչի համառոտ կենսագրությունը (միայն թեկնածուների համար):

**Հայտը պետք է կնքվի կազմակերպության կնիքով և ստորագրվի կազմակերպության ղեկավարի կողմից:**

**Հետաքրքրության հայտերը հարկավոր է ներկայացնել ՀՄՀ-Հայաստան գրասենյակ ոչ ուշ քան 2009թ. սեպտեմբերի 15-ը, ժամը 18:00-ը:**

Խնդրում ենք հաստատել, որ ծանոթացել եք ՇԽ ընտրակարգին և, որ հայտում ներկայացված տեղեկատվությունը ճշգրիտ է և համապատասխանում է ՇԽ ընտրակարգին:

Հաստատում եմ՝ \_\_\_\_\_ (ստորագրություն):

Հավելված 2

Շահառուների խորհրդի անդամների ընտրության քվեաթերթիկ\* (օրինակ)  
2009թ.

N	Ազգանուն, Անուն	Կազմակերպություն	V
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			
11			
12			
13			
14			
15			

*\*Քվեաթերթիկում նշումները կատարվում են թեկնածուի և կազմակերպության անվան դիմաց՝ վանդակում, լատիներեն՝ V տառով: Կարելի է քվեարկել ոչ ավել, քան 5 թեկնածուների օգտին:*